Ժողովրդական Տան թատրոնում

Համազգային մեծ յոբելեանը դրդեց նաև Զուբալովեան Ժողովրդական Տան հայկական դրամատիկ խմբակցութեանը՝ կազմակերպել հոկտ 13-ին հանդիսաւոր տօնական ներկայացում։

Ըստ աւուր պատշաճի Գ. Զուբարի «Սանդուխտ» 4 արարուածով պատմական դրամայի անպայման աջող ու համապատասխան ընտրութիւն էր։

Ներկայացումից առաջ Բենիկ վարդապետը խմբակցութեան հրաւէրով թատրօնը ծայրէ ի ծայր լցրած հանդիսականների առաջ արեց բանախօսութիւն տառերի և տպագրութեան կուլտուրական նշանակութեան մասին։

Իր բանախօսութիւնը հայր-սուրբը սկսեց անսահման ուրախութիւն յայտնելով, որ առիթ է լինում ժողովրդական մեծ տօնը շնորհաւորել հայ աշխատաւոր դասին Ժողովրդական Տանը։ Ապա հայր-սուրբը կէս ժամ, ընդհանուրի լարված ուշադրութեան մէջ, կրկնեց նոյն օրը Վանքի եկեղեցում հանդիսաւոր պատարագի ժամանակ խօսածը (կը տպվի «Մշակի» առաջիկայ համարում)։

Բենիկ հայր-սուրբի բանախօսութիւնը առաջ բերեց խանդավառութիւն։

Այնուհետև սկսվեց ներկայացումը։ Պարտք ենք համարում ընդգծել այդ օրվայ աջողութիւնը, որ բաժին ընկաւ դերակատարներին։ Երևում էր, որ նրանք բարեխղճօրէն պայմանաւորվել էին իրանց սահուն և հարթ խաղով գեղեցիկ պիէսը ամբողջացնել, որի բովանդակութիւնը այնքան մօտ է Ժողովրդական Տան յաճախորդներին...

Մանաւանդ առանձին ուշադրութիւն գրաւեցին Յարութիւնեան (Սանատրուկ), Երամեան (Երուանդ), որոնցից՝ իբրև սիրողներից՝ աւելին չէր պահանջվում։

Սանդուխտի դերում հանդէս եկաւ դերասանուհի տիկին Ադամեան սովորական աջողութեամբ։ Ստիպված ենք արձանագրելու կրկին տիկնոջ արտասանած բառերի վեր-

Չին վանկերի լալկան տոնը, որից Ջանալոն է նա խուսափել։

Լաւ էին նոյնպէս Թաշճեան, տ. Վ. Աբովեան՝ Ոգուհիի, Յովհաննիսեան՝ Վահէի, Յարութիւնեան II՝ քրմապետի և Աբովեան-Ցիցիանովա՝ քրիստոնեայ կնոջ դերում։

Թոյլ էր միայն Հախնազարեան (Շաւարշ), որ թողնում է սկսնակ սիրողի տպաւորութիւն։

«Սանդուխտի» ներկայացումը ցոյց տուեց, որ Ժողովրդական Տան մէջ ևս կարելի է գտնել համապատասխան աշխոյժ դեկօրացիաներ, և միմիայն անհրաժեշտ է բեմիսեօրական նուրբ ընտրութիւն։ Վերջին իմաստով մատնանշելու ենք Ժողովրդական Տան հայկական ներկայացումները դեկավարողի կիրթ ճաշակը։

Վատ չէր երգեցիկ խումբը Միրզայեանի դեկավարութեամբ։

Ընդհանուր հաճելի տպաւորութեամբ անհամար բազմութիւնը ցրվեց գիշերվայ ժ. 12-ի մօտերը։

Ես.